

Անձնագրի կորուստի դեպքում նոր անձնագիր ստանալը

Անձնագրի կորստյան դեպքում քաղաքացին անձամբ ներկայանում է ոստիկանության տարածքային ստորաբաժանում և գրավոր դիմում ներկայացնում ոստիկանության տարածքային ստորաբաժանման պետի անունով:

Դիմումի հետ քաղաքացին ներկայացնում է 35x45 մմ չափսի գունավոր երեք լուսանկար, եթե զինապարտ է՝ զինվորական գրքույկ և անձնագիր տալու համար 1000 դրամի չափով վճարված պետական տուրքի անդորրագիր:

Անձնագրի կորստյան դեպքում կազմվում է կորստյան գործ, կորած անձնագրի փոխարեն տրվում նորը՝ 15-օրյա ժամկետում:

Քաղաքացին անձնագրային ծառայությունից անձնագիրը ստանում է անձամբ կամ իր կողմից լիազորված անձի միջոցով: